ԿԱՐՈ ԺԱՄԽԱՐՅԱՆ

ՊԱԿ-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ 1980-ԱԿԱՆ ԹԹ.

Հատուկ ծառայությունները, հանդիսանալով տվյալ պետության համազգային շահերը պաշտպանող առաջնահերթ ուժային կառույցը, պատմական տարբեր ժամանակահատվածներում իրականացրել են տարբեր առաքելություններ: Հատուկ ծառայությունների գործունեության արդյունքում ձեռք բերված կարևորագույն տեղեկատվության յուրացումն էլ բազում հակամարտությունների պատճառ է դարձել հատկապես հետպատերազմյան աշխարհում: Այս իրողությունները բխում էին հատուկ ծառայություններին «օգտագործելով» համաշխարհային տիրապետության հասնելու անհրատեսական նկրտումներից: «Սառը պատերազմի» գլխավոր մասնակիցների՝ ԽՍՀՄ-ԱՄՆ (համապատասխանաբար հատուկ ծառայությունները ՊԱԿ-ԿՀՎ)պայքարի և ԽՍՀՄ ներքաղաքական զարգացումների համատեքստում հարկ ենք համարում համակողմանիորեն վերլուծել ՊԱԿ-ի ազդեցությունը նախկին ԽՍՀՄ ազգաբնակչության հասարակական-քաղաքական գիտակցության վրա 1980-ական թթ.: Այդ ազդեցության հետևանքները իրենց արդիականությունը չեն կորցրել առ այսօր:

20-րդ դարի վերջին ԱՄՆ կարողացավ հասնել իր արտաքին քաղաքականության շուրջ կեսդարյա վաղեմություն ունեցող գերխնդրի իրականացմանը՝ ԽՍՀՄ փլուզմանը:Այս իրադարձությունը Արևմուտքում ոչ միանշանակ կերպով մեկնում են որպես «սովետական վտանգի վերացման»,միաբևեռ աշխարհակարգի պայմաններում ամերիկյան հիպերտերության քաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդման ժամանակաշրջան[1]: Լուրջ հաջողություններ արձանագրեցին նաև արևմտյան հատուկ ծառայությունները:Պատմության թատերաբեմից հեռացավ հզորագույն ՊԱԿ-ը,որը ամերիկյան ԿՀՎ-ի և իսրայե-

[1] ԱՄՆ-ում ԽՍՀՄ փլուզման հետ կապված խիստ իրարամերժ կարծիքներ են հնչում նաև «Սառը պատերազմի» և նրանում ներքաշված պետությունների հարաբերությունների վերաբերյալ: ԿՀՎ վետերան, հետախուզության սպա Միլդտ Բրիտենի կարծիքով «Սառը պատերազմը» ոչ միայն չի ավարտվել, այլ շարունակվում է նոր թափով և ուժերի հավասարակշռությամբ (ՈՂ դիտարկվում է որպես ԽՍՀՄ հետնորդ - Կ.Ժ.) հատուկ ծառայությունների գործունեության բնագավառում նախանշելով նորանոր բախումներ (Տե՛ս Brieten M., Secret Warrior, New York., 1995, p.37): Այս տեսակետը տարածված է նաև նախկին ԽՍՀՄ ռազմաքաղաքական շրջանակներում «Հատուկ ծառայությունները «ծնհալ» չեն տեսնում» գաղափարի տեսքով: (Տես Красильников Р. С.,Новые крестоносцы ЦРУ и перестройка,Москва, 2003г., стр.433 – 437):

լական Մոսադի հետ դասվում էր համաշխարհային «լավագույն եռյակի» մեջ և հանդիսանում էր Հոգեբանական պատերազմի ռահվիրաներից մեկը: Ոչ միայն գիտական,այլև պարզ կենցաղային հարաբերություններում առ այսօր շրջանառվում է այն հարցը,թե ուր էր գերիզոր ՊԱԿ-ը,երբ ԽՍՀՄ-ը «փլուզում էին»: Վերը ասված խնդիրները լավագույնս հասկանալու համար փորձենք վերլուծել ՊԱԿ-ի վերելքը մինչև 1980-ական թթ.-ի սկիզբը և աստիճանական թուլացումի պայմանավորող գործոնները արդեն 1980-ական թթ.-ի վերջին:

Խնդրո առարկա ժամանակաշրջանից շեղվելով՝ նշենք,որ ՊԱԿ-ի գործունեության մեջ բեկումնային էր 1967 թ., երբ ՊԱԿ-ի ղեկավարությունը ստանձնեց *Յու. Վ. Անդրոպովը* (ՊԱԿ-ի նախագահ 1967-1982թթ., ԽՍԿԿ ԿԿ առաջին քարտուղար 1982-1984թթ.): Նախքան ԽՍԿԿ ԿԿ առաջին քարտուղարի պաշտոնավարումը, Յու. Վ. Անդրոպովը արմատական բարեփոխումներ իրականացրեց ՊԱԿ-ի ներքին համակարգում, որոնց արդյունքում ՊԱԿ-ի կառուցվածքային 3 ստորաբաժանումների(հետախուզություն, հակահետախուզություն և ռազմական հակահետախուզություն) կողքին հայտնվեց բացառապես նոր՝ տեղեկատվության վերլուծությամբ զբաղվող մի բաժանմունք[2]: Կարևոր էր նաև 1979թ. ահաբեկչության դեմ պայքարի կոչված առանձին ստորաբաժանման հիմնումը, որը հետագայում ստացավ «Ալֆա» անվանումը[3]: Խորհրդային հետախուզությունը,համագործակցելով ԳԴՀ հետախուզական մարմինների հետ, կարողացավ ժամանակին յուրացնել Արևմուտքի տեխնոլոգիական նորամուծությունները հատկապես ռազմական արդյունաբերության բնագավառում[4]: Իսկ քաղաքական հակահետախուզությունը հաջողությամբ դիմակայեց դեռևս *Ի. Վ. Ստալինի* մահից հետո ամերիկյան դիվանագիտության կողմից մշակված հատուկ ծրագրերին և Հոգեբանական պատերազմի շրջանակներում իրականացվող գործողություններին[5]: Այս բարեփոխումները հիմք հանդիսացան մինչև 1980-ական թթ. կեսերը ՊԱԿ-ի անխափան և նպատակասլաց գործունեության համար:Սակայն ԽՍՀՄ միահեծան իշխանավորներից ոչ ոք ըստ արժանվույն

---

[1] Бобков Ф.Д., КГБ и власть, Москва, 2003 , стр.202 – 203:

[2] Նոր հիմնված ստորաբաժանումները լուրջ գործունեություն ծավալեցին 1980թ. Մոսկվայում անցկացվող Օլիմպիական խաղերի ժամանակ: Յու. Վ. Անդրոպովի գլխավորած « Օլիմպիադա 80» կոմիտեի կազմում ընդգրկված էին ՊԱԿ-ի ավելի քան 20000 աշխատակիցներ:Նրանց կողմից իրականացված օպերատիվ միջոցառումների արդյունքում հնարավոր եղավ կասեցնել հատկապես արևմտյան հատուկ ծառայությունների կողմից կազմակերպված մի շարք հոգեբանական և ահաբեկչական ակտերի իրականացումը Մոսկվայում (http:// ru wikipedia.org/wiki/1980 – e):

[3] Секретные материалы 20 века, N22 (252), 2008, стр.14:

[5] Яковлев Н. Н., ЦРУ против СССР, Москва, 2003, стр.190:

չգնահատեց ՊԱԿ-ի դերակատարումը Մեծ քաղաքականության մեջ՝ *Յու. Վ. Անդրոպովի* պաշտոնավարման ընթացքում ԽՍԿԿ ԿԿ առաջին քարտուղար *Լ. Ի. Բրեժնևը* (1964-1982թթ.) ոչ միշտ էր հավանություն տալիս ՊԱԿ-ի նախագահի ծրագրերին և առաջարկներին,որոնք ,անշուշտ, ուղղված էին ԽՍՀՄ պաշտպանունակության ուժեղացմանն ու ներքաղաքական հակասությունները հաղթահարելուն:

Մեր կարծիքով, 1980-ական թթ. սկզբին ՊԱԿ-ի վերելքը պայմանավորող առաջնահերթ գործոնը *Յու. Վ. Անդրոպովի՝* ՊԱԿ-ի նախագահ լինելն էր: Սակայն 1983 թ.-ից ԽՍՀՄ ղեկավարությունը ոչ միայն չկարողացավ ճիշտ կազմակերպել ՊԱԿ-ի աշխատանքը, այլև դուրս բերել երկիրը փլուզման տանող ճանապարհից:Օբյեկտիվորեն 1980-ական թթ. վերջին ՊԱԿ-ի գործունեությանը խոչընդոտող հիմնական հանգամանքներն էին.

1.«Ներկաթե վառաուլոր». որը Արևմուտքում տարեցտարի զարգացող տեխնոլոգիաների պայմաններում այլևս հնարավոր չէր արհեստականորեն պահել,իսկ ՊԱԿ-ի կողմից կատարված բոլոր առաջարկները այս խնդրի կարգավորման հետ կապված ուղղակիորեն չէին ընդունվում ԽՍՀՄ ղեկավարության կողմից[6]:

2.Հույժ գաղտնի տեղեկությունները այն մասին, որ ԽՍՀՄ բարձրաստիճան քաղաքական գործիչները հավաքագրված էին արևմտյան հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից[7]: Ըստ այդ տեղեկությունների,նրանցից ոմանք նույնիսկ հանդես էին գալիս «ազդեցության» գործակալների դերում[8] :

3.ԽՍՀՄ ողջ տարածքում սկիզբ առած անասելի կաշառակերությունը[9], որը ներթափանցել էր նաև քաղաքական վերնախավի շրջանակները և նույնիսկ խորհրդաամերիկյան հարաբերությունների ասպարեզ:Բավական է միայն նշել ՊԱԿ-ի նախագահ Վ. Վ. Բակատինի անունը, որն իր եռամսյա կառավարման

---

[6] Նմանօրինակ առաջարկներից էր վիդեոտեխնիկայի հայրենական արտադրությունը կազմակերպելը. որը վերջ կտար ապօրինի ճանապարհով այս տեխնիկայի ներմուծմանը ԽՍՀՄ: Սակայն այն ընդունվեց ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի կողմից միայն Յու. Վ. Անդրոպովի՝ ԽՍԿԿ ԿԿ առաջին քարտուղար դառնալուց հետո (Տե՛ս Бобков Ф.Д., КГБ и власть, Москва, 2003 , стр. 226):

[7] Дроздов Ю. И., Вымысел исключен. Записки начальника нелегальной разведки. Москва, 2000, стр.47:

[8] 1980 ական թթ.«ազդեցության» գործակալների հավաքագրումը ԿՀՎ «Գաղտնի գործողությունների» ծրագրի կարևոր բաղադրամասերից մեկն էր: Այն վերաբերվում էր ամերիկյան հետախուզությանը հետաքրքրող պետության քաղաքական գործիչներին: ԿՀՎ հրահանգավորման համապատասխան փուլերը անցնելուց հետո վերոնշյալ քաղաքական գործիչները պրոամերիկյան լայնամասշտաբ օպերացիաներ էին իրականացնում թե՛ քաղաքական էլիտայի, թե՛ ազգաբնակչության շրջաններում (Տե՛ս Woodward B. Veil, Secret Wars of the CIA 1981-1987, New York. ,1987,p.75):

[9] Бобков Ф. Д.,КГБ и власть,Москва,стр.211 – 212:

ընթացքում իրականացրեց պետանվտանգության մարմինների կազմալուծումը[10]: Նա ուղղակի «նվիրեց» ԿՀՎ գործակալներին հույժ գաղտնի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր[11]: Եվս մեկ փաստաթուղթ ամբողջացնում էր Մոսկվայում գտնվող ԱՄՆ դեսպանատան տարածքում ՊԱԿ-ի աշխատակիցների կողմից տեղադրված լսողական սարքերի համակարգված սխեման: Այն հանձնվեց ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Ստրաուսսին[12]: Այս քայլը ոչ միայն նյութական մեծ վնաս հասցրեց պետությանը, այլև բացասաբար անդրադարձավ ՊԱԿ-ի աշխատակիցների բարոյահոգեբանական վիճակի վրա:

4.Ազգային ինքնագիտակցության դրսևորումները,անջատողական գործընթացները և տարածքային ամբողջականության խնդիրը ԽՍՀՄ կազմում գտնվող տարբեր ժողովուրդների միջև: Ինչպես «Երկաթե վարագույրի» հաղթահարման, այնպես էլ ազգային հարցի հետ կապված պետանվտանգության մարմինների աշխատանքը չէր կոորդինացվում ԽՍՀՄ ղեկավարության կողմից: Թեժ կետեր կատարված ՊԱԿ-ի աշխատակիցների այցելությունները հիմնականում կրում էին ծևական բնույթ: Նրանց կողմից մանրամասնորեն չէին ուսումնասիրվում կոնֆլիկտների և բախումների բուն պատճառները, չէին գնահատվում դրանց հետևանքները: Նման պայմաններում ՊԱԿ-ն ի զորու չէր խաթարելու այն սպառնալիքը, որն ուղղված էր ԽՍՀՄ ժողովուրդների «եղբայրության և բարեկամության» դեմ: 1980-ական թթ. վերջին ազգային հարցի սրումը իր գագաթնակետին հասավ հատկապես հայ-ադրբեջանական հարաբերություններում[13]:

Վերը ասված հանգամանքների առկայության պայմաններում ՊԱԿ-ն մեծապես ներգործեց ոչ միայն ԽՍՀՄ ազգաբնակչության,այլև հետագայում արդեն անկախացած նախկին միութենական հանրապետությունների ազգային անվտանգությունն ապահովող մարմինների գործունեության վրա: Հատկանշական է այն փաստը,որ մինչև 1980-ական թթ.կեսերը ԽՍՀՄ ազգաբնակչությունը որոշակիորեն վստահում էր ՊԱԿ-ին՝ համատարած անկարգության պայմաններում այն համարելով միակ պետական կառույցը,որտեղ կարելի էր որոշ հարցադրումների պատասխաններ ստանալ: Ասվածի ապացույցը *Մ. Մ. Գորբաչովի* (1985-1991թթ.) խոսքերն են.«Ինչու են մարդիկ գնում ՊԱԿ-ի,այլ ոչ

---

[10] Վ. Վ. Բակատինը իր կողմից գրված «Избавление от КГБ» գրքում պարզ կերպով նշում է, որ նախքան ՊԱԿ-ի նախագահ դառնալը իրեն Բ. Ն. Ելցինի և Մ. Ս. Գորբաչովի կողմից հանձնարարվել էր մասնատել և փլուզել ՊԱԿ-ն (http:// ru .wikipedia.org/wiki/1980 – e):

[11] Красильников Р. С.,Новые крестоносцы ЦРУ и перестройка,Москва, 2003, стр.375 – 376:

[12] http ://ru.wikipedia.org/wiki/1980 – e:

[13] Бобков Ф. Д.,КГБ и власть,Москва,2003,стр.302 – 321:

թե ԿԿ-ի ընդունարան»[14]: Սակայն ԽՍՀՄ փլուզմանը նախորդող և հենց այդ ժամանակաշրջանի իրողությունները հիմք հանդիսացան ՊԱԿ-ի հանդեպ անվստահության առաջացման համար: Հենց այս հակասական պատկերի շրջանակներում ձևավորվեց ՊԱԿ-ի ազդեցության մեխանիզմը: Այդ մեխանիզմը գործում էր *վախի* և դրանից բխող *վտանգի* զգացողությունների համադրմամբ: *Վախի* պրոբլեմատիկան սերտորեն աղերսվում էր ԽՍՀՄ ներքաղաքական հարաբերությունների հետ: Այդ հարաբերությունների դիտանկյունից ՊԱԿ-ը պատկերվում էր սահմռկեցուցիչ տեսքով: ՊԱԿ-ի համակարգի աշխատակիցների նկատմամբ լուրջ զգուշավորություն էր ցուցաբերվում հասարակական գործունեության բոլոր բնագավառներում: Իսկ *վտանգի* զգացողությունը կապված էր ԽՍՀՄ քարոզչական մեքենայի ներշնչած գաղափարաբանության հետ: Այն ենթադրում էր արևմտյան «անպիտան» արժեհամակարգի հետ «սովետական քաղաքացիների» չառնչակցվելու լեգենդը[15]:Այս համադրմամբ ստեղծված բարդույթի բթացումն էլ 1980-ական թթ. վերջին դարձավ ՊԱԿ-ի իշխանության լծակների թուլացման պատճառներից մեկը: Վախի զգացողության բթացումը կապված էր ԽՍՀՄ ներպետական քաոսի հետ, որը նույնիսկ շրջանցվում էր ՊԱԿ-ի կողմից: Արդյունքում, ՊԱԿ-ն հեղինակազրկվեց և կորցրեց տասնամյակների ընթացքում ԽՍՀՄ ողջ տարածքում ձեռք բերված վստահությունը: Վտանգի զգացողություն բթացման ազդակներից մեկը հանդիսացավ 1989թ. Մալթա կղզում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Ավագի և Մ. Ս. Գորբաչովի հանդիպման ժամանակ վերջինիս կողմից հնչեցված հայտարարությունը:

Ըստ այդ հայտարարության, ԽՍՀՄ-ը ԱՄՆ-ին այլևս չէր համարում իր ռազմական հակառակորդը[16]:

Այնուամենայնիվ, այս բարդույթը իր հետևանքները մատնանշեց նաև 1991 թ -ից հետո:Հայաստանում այսօր՝ ԽՍՀՄ փլուզումից շուրջ 20 տարի անց

---

[14] Նույն տեղում,էջ 215:

[15] Լեգենդի հիմքը արտացոլում էր դեռևս 1950-ական թթ.կեսերից սոցիալիստական օրինականության ամրապնդման և սոցիալիստական դեմոկրատիայի արժեքների զարգացման միտումները: Սակայն, ըստ հայտնի ամերիկագետ-պատմաբան Ն.Ն.Յակովլևի. հատկապես Ի.Վ. Ստալինի մահից և «անհատի պաշտամունքի» քննադատությունից հետո գտնվեցին մարդիկ,ովքեր ինչ-ինչ պատճառներով սկսեցին վարկաբեկել խորհրդային կացութաձևը՝իրենց համարելով «գաղափարապես» ազատ(См Яковлев Н.Н.,ЦРУ против СССР,Москва,2003,стр.194): Արդեն 1980-ական թթ. վերջին «այլախոհությունը» դրսևորեց հակամերիկյան լեգենդի գաղափարական անկումը խորհրդային հասարակական –քաղաքական մտքում:

[16] http://www coldwar.ru/gorbachev.2php:

ՍՍԾ-ը շարունակվում է ոչ պաշտոնական շրջանակներում անվանվել «КГБ»,իսկ այս համակարգի աշխատակիցները՝ «кгбшник»: Բելառուսում ազգային անվտանգության մարմինները շարունակվում են նախկին ձևով պաշտոնապես կոչվել «КГБ»:Հարկ է նշել,որ նախկին խորհրդային հանրապետություններում պետական անվտանգության մարմինները դիտվում էին փակ ռեժիմի և պետական անվտանգությունը պաշտպանող քաղաքական ոստիկանության տեսքով[17]: Այդ ավանդույթը ժառանգաբար շարունակվում է նաև այսօր:Հատկապես ռուսական կինոֆիլմերում հատուկ ծառայությունները պատկերված են հույժ գաղտնի պետական կառույցների տեսքով,իսկ հատուկ գործակալները մարմնավորում են անսահման խելքով,գերբնական ուժով օժտված մարդկանց կերպարներ:

Այսպիսով,1980-ական թթ. ՊԱԿ-ի՝ հասարակության վրա ունեցած ազդեցության վերլուծությունը կարևոր նշանակություն ունի ինչպես այդ խոշորագույն հատուկ ծառայության անկման,այնպես էլ ԽՍՀՄ փլուզման հարցերը լուսաբանելիս: Կարևոր է նաև այս երկու պատմական իրողությունները պատճառահետևանքային կապով միավորելը և ԽՍՀՄ փլուզումը ՊԱԿ թուլացման դիտանկյունից ուսումնասիրելը: «Սառը պատերազմը» դեռ 1940-ական թթ. վերջից ցույց տվեց,որ ցանկացած երկիր չի կարող գոյություն ունենալ առանց հատուկ ծառայությունների: 21-րդ դարում նույնպես գիտական և տեխնոլոգիական զարգացվածության պարագայում այս մոտեցումը չի կորցրել իր նշանակությունը:

---

[17] Աղայան Ս.,Ազգային անվտանգություն. հասկացությունը,էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները . Երևան, 2003. էջ 5: